



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

10 ՄԱՅԻՍԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Գևորգյանը, Արմեն Մարգարյանը, Գեղամ Մարգարյանը, Գեղամ Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքի ղեկավարի օգնական Եղիշե Նազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետներ՝ Սամվել Օրդոյանը և Կարեն Մարտիրոսյանը, առաջին կարգի մասնագետ Նաիրա Ստեփանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 5 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 5 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 21-ի 03-Ա որոշման թիվ 1 հավելվածը և 07 որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

4. «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին ցեմենտ հատկացնելու մասին:

5. Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ Լևոն Օնիկի Շահբազյանի սեփականության իրավունքը ճանաչելու և 115.7 քառ.մ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

6. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 46-Ա որոշման որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տան մետաղապլաստե դուռը ապամոնտաժելու և Վերնաշեն բնակավայրի մշակույթի տանը տեղադրելու համար թույլտվություն տալու մասին:

8. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական հատկացումներ կատարելու մասին:

9. Անհատույց օգտագործման իրավունքով ավտոմեքենա ընդունելու համար «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին թույլտվություն տալու մասին:

10. Վարդգես Ձոնիկի Մովսիսյանին և նրա ընտանիքի անդամներին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

11. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-

ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու նպատակով կազմակերպված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համաձայնություն տալու մասին:

12. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի Բաղադրիչ 2-ին մասնակցության նպատակով ձևավորված Նախաձեռնող և Աշխատանքային խմբերի կազմերը հաստատելու մասին:

Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/